Հավելված
Ուրասար համայնքի ավագանում 2013թվականի
թիվ 5-Ն որոշում

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## Լ Ո Ռ Ո Ւ   Մ Ա Ր Զ

## Ո Ւ Ր Ա Ս Ա Ր   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի

## Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն

# Ք Ա Ռ Ա Մ Յ Ա   Ծ Ր Ա Գ Ի Ր

2013—2016 թ թ

ԿԱԶՄԵՑ՝
Ուրասար համայնքի ղեկավար՝ Ս. Կիրակոսյանը

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է՝
Ուրասար համայնքի ավագանու 18 . 02 . 2013- թիվ 05-Ն որոշում

# Բովանդակություն

1. Արտասարի գյուղական համայնքի համառոտ նկարագիրը:
2. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա պլան:
3. Համայնքի բյուջեն:
4. Ժողովրդագրություն
5. Գյուղատնտեսություն
6. Կոմունալ ծառայություններ և ենթակառուցվածքների զարգացում
7. Կրթություն, առողջապահություն և մշակույթ:
8. Բնակելի ֆոնդ
9. Իրավական խնդիրներ
10. Ուժեղ և թույլ կողմերի վերլուծություններ:

# Նորաշեն համայնքի համառոտ նկարագիրը.

Նորաշեն համայնքը (նախկին Շորժեղլու գյուղը) գտնվում է Արարատյան դաշտի հարավ արևմտյան մասում 10 կմ. հեռավորության վրա: Գյուղը հիմնադրվել է 1805-1810թ-ին, տարածքը կազմում է 2320(հա) ընդհանուր տարածության մեջ գյուղատնտեսական հողերը կազմում են 2032(հա) կամ 84%-ը.

վարելահողեր - 371(հա)
խոտհարքներ - 910(հա)
արոտներ 692(հա)
այլ. հողեր 58(հա)

Գյուղի բնակչությունը ներկա ժամանակահատվածում 1525 է:

Մինչև 1950թ-ը գյուղի ազգաբնակչության 90%-ը կազմել են ռուս ազգի բնակիչները:

1960-ական թվականներից երբ կառավարության որոշմամբ որոշվեց գյուղի վերաբնակեցման և գյուղի տարածքով ջրամբարի կառուցման խնդիրը, այդ ժամանակահատվածից էլ սկսվեց ռուս ազգաբնակչության արտագաղթը, որից հետո փոխարենը բնակիչները տեղափոխված էին այլ բնակավայրեր, իսկ նրանց փոխարեն գյուղը համալրված էր ադրբեջան և հայ ազգի բնակիչներով: Գյուղի վերաբնակեցման և ջրամբարի կառուցման կառավարության որոշումը կյանքի չկոչվեց և շարունակվեց մինչև երկրաշարժը, իսկ երկրաշարժից հետո մինչև օրս այդ. մասին որևէ վերաբնակեցման կամ օրինաչափական այլ որոշումներ չեն եղել: Մինչև երկրաշարժը համայնքի բնակչության թիվը եղել է շուրջ. 750 մարդ, այդ թվում 350 մարդ. եղել են ադրբեջանցիներ, որոնք ղարաբաղյան շարժման տարիներին փոխել են ադրբեջան, որի արդյունքում համայնքի բնակչության թիվը կտրուկ պակասել է:

# Ժողովրդագրություն

1.2 Համայնքի մշտական բնակչության թիվը
ըստ «2011թ մարդահամարի» արդյունքների կազմել է
365 մարդ, այդ թվում տղամարդիկ կազմում են 45,7%-ը
բնակչության սեռատարիքային կազմը հետևյալն է՝

կանայք - 198
տղամարդիկ - 167
թոշակառուներ - 46
փախստականներ - 10
հաշմանդամներ - 2
աշխատունակներ - 222
աշխատանք ունեցողներ - 135
գործազուրկներ 87.
ընտանիքների (ծխերի) թիվը - 174.
«Փարոս» ծր. նպաստառու ընտանիքներ - 31
Հայրենական պատերազմի մասնակիցներ —
Ծնողազուրկ երեխաներ —
Զոհվածների ընտանիքներ —
Անապահով ընտանիքներ —

## ՀՀ. Լոռու մարզի Ուրասարի համայնքի զարգացման 2013-2016թթ քառամյա ծրագիր

Համայնքի զարգացման քառամյա պլանը ընդհանուր ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը, համայնքի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատումը, ապագայի տեսլականի զարգացման ուղղությունները, ներդրումային փաստերի ամբողջությունը և նախատեսում է տեղական ինքնակառավարման փաստաթղթային համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և կայուն բյուջետավորման գործընթացի իրականացումը:

Համայնքի սոցիալ տնտեսական զարգացման և առկա հիմնախնդիրների լուծման հիմնական միջոցը համայնքի բյուջեն է, որի եկամուտային մասը մեկ տարվա կտրվածքով Ուրասարի համայնքում կազմում է 8000,0 (հազ. դր.):

### Համայնքի բյուջեն.

Համայնքի սեփական եկամուտները կազմում են բյուջեի 54%-ը կամ 4.500.0. հազ. դր. մնացած մասը 3.715.0 (հազ. դրամ) կամ 46%-ը հատկացվել է պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով: 2012թ.ին բյուջեի մուտքերը կազմել է 81% կամ պլանավորված 7266,0 մուտքերը կազմել է 5880.0 հազ. դր. և ըստ եկամտատեսակների ունենք հետևյալ. պատկերը.

| Եկամտատեսակներ. | Նախատեսված. բյուջեով. | Փաստացի մուտքագրվ. | Կատարումը %-ը |
|---|---|---|---|
| 1. Հողի հարկ | 2384.0 | 1.773.6 | 74.3 |
| 2. Գույքա հարկ. | 126.0 | 152.0 | 120.0 |
| 3. Անշարժ գույքի վարձ. և ն.ե. | 45.0 | 53.0 | 117 |
| 4 Հողի վարձավճար. | 1.205.0 | 621.0 | 51.0 |
| 5. Այլ. գույքային վարձակալ. վճ | 400.0 | 130.0 | 33.0 |
| 6. Այլ. ոչ հարկային եկամտ. | 20.0 | 10.0 | 50.0 |
| 7. Համահարթեցման դոտացիա | 3115.4. | 3115.4. | 100.0 |
| Ընդ-հանուրը | 7295.4 | 5854.4 | 80.2 |

Ստեղծված այսպիսի իրավիճակում համայնքը հնարավորություն չունի սեփական միջոցներով որևէ Ծրագրեր իրականացնելու կամ ներդրում կատարելու համար: Համայնքում հիմնախնդիրները շատ են. Գրեթե բոլոր ոլորտներում անհրաժեշտություն կա վերակառուցելու արդիականացնելու, բարեկարգելու և այլն, սակայն կան նաև այնպիսի չլուծված խնդիրներ. որոնք հրատապ լուծում են պահանջում, որոնց լուծման համար անհրաժեշտ է պետական աջակցություն, որը հնարավորություն կտա իրականացնելու մեծ ծախսեր պահանջող առաջնային անհրաժեշտության հիմնախնդիրները, որոնց թվում են 1936թ-ին կառուցված խմելու ջրատարի ներքին և արտաքին ցանցը, համայնքի գազաֆիկացման հարցը, համայնքի ճանապարհային ցանցի վերանորոգման հարցը, դպրոցի շենքի շինարարության ավարտի հարցը, գերեզմանատան ցանկապատման և բարեկարգման հարցը, բնակարանային շինարարության և փողոցների վերանորոգման և գիշերային լուսավորության հարցերը:

## Սոցիալ-տնտեսական իրավիճակի հիմն. ցուցանիշները

### Գյուղատնտեսություն

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2320(հա) ընդհանուր տարածության մեջ գյուղատնտեսական հողերը կազմում են 2032(հա) կամ 84%-ը որը ունի հետևյալ կազմը:

| Անվանումը. | Չափը.(հա) | որից սեփական. |
| --- | --- | --- |
| Վարելահողեր | 371(հա) | 123.(հա) |
| Խոտհարքներ. | 910 (հա) | 153 (հա) |
| Արոտավայրեր | 692 (հա) | – |
| Այլ հողատարածքներ. | 58 (հա) | – |
| | | |

Դաշնային բնակչության 50%-ը զբաղված է գյուղա-
տնտեսությամբ հիմնականում անասնապահությամբ,
որը համեմատաբար ավելի եկամտաբեր է և
քիչ Յախսային է պահանջված քան հողագործությունը:
Անկախ այս բազմազանությունից, նույնպես առկա են
խնդիրներ, որոնք խոչընդոտում են անասնապահա-
կան ճյուղերի արդյունավետության առաջընթացին,
որոնցից են կերի, մաս. բրդի գնման ցածր
գները, արդյունքների իրացման հետ կապված խնդիրները
և այլն:

Օդերևութաբանական ծայրահեղություններից հիմնականում
վնասված է կարտոֆիլը և աշնանացան ցորենը,
կարտոֆիլի միջին բերքատվությունը չի գերազանցում
120 ցենտներից, իսկ ցորենը 15 ցենտներ, որը համեմատաբար
շատ ցածր ցուցանիշ է և Դաշնային բնակիչները
դժվարանում են սեփական հողատարածքներն օգտագործել
որպես խոտհարք անասնակերակրմանը ապահովելու և
անասնակերով ապահովելու համար: Բերքատվության ցածր
ցուցանիշները պայմանավորված են ոչ միայն բնակլիմայական
վատ պայմաններով, այլև բնակչության աղքատության ֆինանսական
միջոցների բացակայության պատճառով, երբ գյուղացին հնարավորու-
թյուն չունի անհրաժեշտ վառելիքի և որակյալ սերմացուների, հանքային,
պարարտանյութ, թունաքիմիկատներ ձեռք բերելու և ժամանակին աշխատանքներ
կատարողներին վճարելու համար:

Այս պարագայում գյուղացին կարիք ունի պետական
աջակցության, որպեսզի կարողանա ոտքի կանգնել և հետագայում
ինքնուրույն հոգալ իր հոգսերը:

## Բնակարանային շինարարություն.

Համայնքի բնակ-ֆոնդը կազմում է 9500մ² բնակելի մակերեսով 148 բնակ. միավորով առանձնատների շուրջ 70%-ից ավելին 180 տարվա պատմություն ունեցող փայտյա տնակներ են, որոնց գերակշռող մասը բնակության համար պիտանի չեն, այդ իսկ պատճառով սեփականատերերը չունենալով ֆինանսական միջոցներ, իրենց բնակարանները վերակառուցելու համար ստիպված են շարունակել բնակվել նշված վթարային տնակներում կամ էլ տեղափոխվում են այլ բնակավայրեր:
Երկրաշարժից հետո հանրապետության կառավարած [illegible] ծրագրերի շրջանակներում իրականացված բնակարանային շինարարության ոչ մի ծրագրով համայնքում շինարարություն չի իրականացվել:
Համայնքի շուրջ 30 ընտանիքներ բնակարանի կարիք ունեցող [illegible] և հանրապետության պարզ(?) շրջաններից գաղթած. երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներ են, որոնք կորցնելով իրենց կարողությունները բնակություն են հաստատել Կարասար համայնքում:
Այս խնդրի լուծման համար բնակիչները ակնկալում են պետության աջակցությունը, կառավարությունից օգնել իրավիճակը շտկելու համար:

## Կրթություն Մշակույթ Սպորտ.

Համայնքը ունի նորակառույց դպրոցի շենք, որը կառուցվել է դեռևս 1991թ-ին ԽՍՀՄ-ի տարիներին, սակայն ավարտին է հասցվել 2002թ-ին; ունի բոլոր հնարավոր պայմանները. Երեխաների ուսուցումը բարձր մակարդակով կազմակերպելու համար:
Դպրոցում ներկայումս սովորում են 39 աշակերտներ բոլոր առարկաների գծով ապահոված է ուսուցչական կազմը, սակայն որոշ առարկաների գծով համայնքում համապատասխան առարկաներ գծով մասնագետներ. Շաբաթական պարապմունք հրավիրվել են այլ վայրերից:

Կրթություն.

| Կրթական օջախներ. | Քանակը | Աշակերտների թիվը. | Դասատուների թիվը. |
|---|---|---|---|
| Միջնակարգ հանրակրթական դպրոց | 1 | 39 | 8 |
| Մանկապարտեզ | — | — | — |
| Երաժշտական մանկական դպրոց. | — | — | — |
| Գեղարվեստի մանկական դպրոց | — | — | — |

## Մշակույթ

Համայնքը ունի մշակույթի տուն որը կառուցվել է 60-ական թվականներին, որը ունի հիմնանորոգման կարիք. որի պատճառով ներկայումս չի գործում, մշակույթի օջախում է գտնվում նաև գրադարանը, որտեղ դեռևս խորհրդային տարիներից մնացել է ռուսական գրականություն. հայերեն գրականություն չկա որի պատճառով նույնպես չի գործում

## Սպորտ.

Համայնքը ունի ֆուտբոլի և վոլեյբոլի խաղահրապարակներ որտեղ իրենց ազատ ժամանակն են անցկացնում գյուղի երիտասարդները, համայնքում ձևավորվել է ֆուտբոլային թիմ, որը ամռան ամիսներին նույնպես մասնակցում է պատանեկան միջհամայնքային ֆուտբոլի մրցումներին:

Համայնքի ուժեղ և թույլ կողմերի

վերլուծություններ հնարավորություններ և վտանգներ

## Ուժեղ կողմեր.

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման վրա ազդող ներքին և արտաքին, դրական և բացասական գործոնների մեջ վերլուծությունը, որը պետք է իրականացվի օբյեկտիվ առանձնացված կարգով հնարավորության չափով համայնքի զարգացման պլանավորման խնդիրների լուծման համար:

1. Համայնքի ուժեղ կողմերի առավել կարևոր նախապայմաններից առաջինը դա ֆինանսական միջոցների առկայությունն է, որը կարող է գյուղատնտեսական կողմից առավելագույն եկամուտների հավաքագրման և բյուջեի միջոցները առանձնացված ժամկետներում ապահովելու համար:
2. Առաջարկել գյուղացուն հնարավորինս տրամադրել հողատարածքներ ամբողջությամբ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար, որը հնարավորություն կտա ավելացնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը:
3. Համայնքի ենթակառուցվածքների իրականացում

## Թույլ կողմեր վտանգ առաջացնող պատճառները.

1. Ֆինանսական միջոցների բացակայություն
2. Խմելու ջրագծի վերանորոգում
3. Ակումբի շենքի վերանորոգում.
4. Գերեզմանատան ցանկապատում և բարեկարգում
5. Ճանապարհի նորոգում

Համայնքի առաջնահերթ նպատակների ծրագրերի առաջադրում և կոնկրետ խնդիրների լուծում

Ծրագիր - 1.

Ուրասար համայնքի 1936թ-ին կառուցված խմելու ջրագծի 8կմ ներքին և արտաքին ցանցի վերակառուցում

Նպատակ-1 Վերականգնել խմելու ջրի ապահովվածությունը և ավելացնել գյուղը սնող ջրի չափը:

Խնդիրը - 1. 3.5կմ հեռավորության վրա գտնվող աղբյուրի ակունքներից գյուղը սնող ջրագիծը ամբողջովին շարքից դուրս է եկել և այժմյան չի հերթագրվում շահագործման; որը պատճառ է դարձել նաև ջրի ապահովվածության և կորուստի: Անհրաժեշտ է փոխել ողջ խողովակաշարը ինչպես նաև կառուցել երկու կամ 3 նոր ջրհավաք ավազան որի արդյունքում կավելանա գյուղը սնող ջրի չափը: Նախանշված աշխատանքները իրականացնելու համար անհրաժեշտ գումարի չափը կազմում է 60.000,000դր. դրամ:

| Իրականացման անվանումը. | Նախահաշվային արժեքը. | Ժամկետը. | Համայնքի ներդրման չափը. | Կատարողը. | Ծախսերը |
|---|---|---|---|---|---|
| Ջրագծի վերակառուցում | 60.000000. | 365 օր | | | |

# Ծրագիր - 2

Համայնքի մշակույթի տան վերանորոգում

Նպատակ - վերականգնել շենքի բնականոն գործունեությունը.

Խնդիր - փոխել շենքի կտուրը 400մ². և իրականացնել ներքին հարդարման աշխատանքներ: Շենքը կառուցվել է 60-ական թվականներին և մինչ օրս ոչ մի վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել:
Անձրևային եղանակների ժամանակ. ամբողջ անձրևաջրերը կտուրից լցվում է ներս և վնասում շենքի պատերը և առաստաղը.

| Հիմնախնդրի անվանումը | Գնահատված դրամական արժեքը | Շահառուների թիվը | Համայնքի ներդրման չափը | Կարգավիճակ. | Ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| Մշակույթի տան վերանորոգում | 15.000000 դրամ. | 365 մարդ | – | | |

## Ծրագիր - 3

# Համայնքի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգում

<u>Նպատակ</u>- Արգելել անասունների մուտքը գերեզմանատան տարածք և պահպանել աշխարհականությունը:

Խնդիր- Ցանկապատել գերեզմանատան տարածքը մետաղյա ցանցով 180գմ. և մետաղյա դռներով որը հնարավորություն կտա արգելել անասունների մուտքը և տարածքը կլինի ապահովված:

| Իրականացնողի անվանումը | Ծախսերի ընդհանուր արժեքը | Ժամանակահատվածը | Համայնքի ներդրման չափը | Կատարող | Ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| Գերեզմանատան ցանկապատում և բարեկարգում | 800,0 | 365 | 800,0 | Համայնք. | 2014թ. |